

ինչպէս Որդի ի Հօրէ. ուստի եթէ Որդի ի Հօրէ ըլլարով՝ Աստուած է, նոյնպէս Հօրի յՈրդւոյ ըլլարով պէտք է որ Աստուած ըլլայ: Իրօք. Եւպիմանու յառաջ բերած երկրորդ հանգանակի ձեւին մէջ՝ որն որ մեր՝ Արիւստան-Աթանասանին հետ նոյնատեսակ է, կը դուռի բացայայտ. «ի Հօրին սուրբ, ի բարեխօսն, յանդն, որ ի Հօրէ ելանէ եւ յՈրդւոյ առնու», : Վարձեալ. մեր՝ Երեսնի Ամբրոնացոյն համեմատ՝ պէտք էր կարգաւ նաեւ մեր հայերէն բնագրին մէջ Հօրդոյն սրբոյ համար՝ «նորին ինքեան ոչ օտար յեութենէ իսկութեան Հօր եւ Որդւոյ», ինչպէս կը կարդանք Որդւոյ համար՝ «նոյն ինքն ի բնութենէ Հօր», :

Արդէն Փլորենտեան ժողովոյն ատեն Աւգենիոս Վ. իր վճռոյն մէջ ազդարարութիւն կ'ընէ Հայոց որ հանգանակին մէջ Հօրդոյն սրբոյ նաեւ յՈրդւոյ ելումը կամ բխումը աւելցուի, զոնէ կիւրակէ եւ գլխաւոր տօնից օրերը: Շատ հաւանական կը համարինք որ վերոյիշեալ սրբագրութիւններէն առաջ՝ որոնք սոյն յաւելումը կը հրամայեն որ եւ իցէ ժամանակ որ զործածուի սոյն հանգանակը, արդէն կը զործածէին մեր քահանայիցիք անոնք՝ որ կաթողիկէ միութեան եւ վարդապետութեան խելամուտ էին: Ստուգիւ չի կրնար աւելի պատշաճ բան կարգադրուիլ մեր եղբարց հոգիները պատասխարելու աս արեւելեան կողմանց սեպհական եղած մոլորութենէն: Հաւատոյ Տարածման Դոդովը 1833ին Յուլ. 14ին գրեց Արքայան Քահանայապետին հրամանաւ առ Աստուծոյ Վերջին արքեպիսկոպոս նախագահ Ս. Պողոս Գեորգիի կարգինալի զահրեւիցութեամբ եւ Անգեղոս Մայիի քարտուղարութեան ատեն: «Սուրբ Դոդովը ձեզի աս ազդարարութիւնը կ'ընէ որ ան կէտերը՝ որոնց համար դուք իսկ կ'ըսէք թէ նշանակներ կամ զրոյշմներ են՝ որոնցմով կաթողիկէայ Հայք հերձուածողներէն եւ հերետիկոսներէն կը զանազանին եւ կը ցուցնեն թէ իրենք Հռոմէական Արիւստացոյ հետ միաբան են, ամբողջապէս պահէք: Աւաստնք են ան կէտերը: 1. Հանգանակին մէջ դաւանիլ թէ Հօրին սուրբ չէ թէ միմակ ի Հօրէ, հապա նաեւ յՈրդւոյ կ'ընէ: Իայց ասոր ալ զգոյշ եղէք որ չըլլայ թէ բառի մը զանազանութիւն կամ բազմապատկութիւն ընէք, հապա մի եւ նոյն բառով անոր ի Հօրէ եւ յՈրդւոյ ելումը բացատրէք ու դաւանիք: Մի եւ նոյն բառով՝ որպէս զի աւելի եւս բացայայտ ըլլայ յայտ՝ վարդապետութեան՝ ամենէն աւելի մտադրութեան արժանի կէտը թէ ի Հօրէ եւ յՈրդւոյ իրրեւ մի (բացարձակ) սկիզբէ եւ միմով զործողութեամբ յառաջ կու գայ Հօրին սուրբ:՝

¹ Տես այս նկատմամբ նաեւ՝ Հիմնական Տարբերութիւն Աթ. եւ Էջմ.

դաւանութեանց. ապ. Ս. Պողոս. 1864 էջ 27-42: